ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻՑ ՍՈՑԻԱԼԻԶՄԻՆ ԱՆՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Հ. Ն. ԱԶԱՏՅԱՆ
Հայկ. ՍՍՌ ԳԱ բղթակից-անդամ

Անցյալ դարի քառասունական թվականներին Մարքսը և Էնգելսը հայտնագործեցին և տեսականորեն ձևակերպեցին կապիտալիզմի զարգացման օբյեկտիվ օրինաչափությունները, որոնք բնական անհրաժեշտությամբ տանում են դեպի նրա խորտակումը և նրա փոխարինումը սոցիալիզմով։ «Կոմունիստական Մանիֆեստի» հրապարակումից հետո անցել է ամբողջ հարյուր տասնչորս տարի, և այս երկարուձիգ տարիների հարուստ համաշխարհային պատմությունը լիովին հաստատել է պրոլետարիատի պատմական կոչմանը և նրա սոցիալիստական ռևոլյուցիային վերաբերող այն բոլոր հանճարեղ դրույթների ճշմարտությունը, որոնք 1848 թ. հռչակվեցին «Մանիֆեստ»-ում։

Կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու պատմական անհրաժեշտության կապակցությամբ մեծ հետաքրքրություն է ներկայացնում Կ. Մարքսի «Կապիտալի» III հատորի 27-րդ գլուխը, որտեղ վերլուծության է ենթարկվում բաժնետիրական ընկերությունների սիստեմը և տրվում է դրանց պատմական դերի գնահատականը։

Խորը թափանցելով կապիտալի էությունը, մեր մեծ ուսուցիչը հանգեց այն եզրակացության, որ եթե մասնավոր կապիտալն իր դիրքերը զիջում է բաժնետիրական (հասարակական) կապիտալին, ապա ուրեմն կապիտալը, որպես մասնավոր սեփականություն, *այլևս անզոր է կատարել իր պատմական կոչումը և պետք է իր տեղը զիջի ավելի բարձր հասարակարգի։*

Ակցիոներական կապիտալին Մարքսը բարձր գնահատական է տալիս, հաշվի առնելով նրա միջոցով ստեղծված վիթխարի արտադրողական ուժերը, ընդլայնված վերարտադրության ծավալի մինչ այդ անլուր չափերը և, հետևապես, աշխատանքի հանրայնացման նոր շրջանակները։ Սակայն կապիտալիզմի արտադրողական ուժերի նվաճումները Մարքսին զրաղեցնում էին պրոլետարիատի վիճակի ու նրա հետագա զարգացման, նրա սոցիալիստական ռևոլյուցիայի արագացման տեսակետից։ Հակառակ բուրժուազիայի գաղափարախոսների, որոնք համարում էին կապիտալիզմը մարդկային հասարակության շահերին լիովին համապատասխանող ու միակ նորմալ հասարակական-տնտեսական կարգը և ըստ այնմ հավերժացնում էին բուրժուական կարգերը, Մարքսը իր բոլոր գործերում հայտարարում է կապիտալիզմը մի անցումնաշրջան, որը պատմականորեն հող է պատրաստում, նախադրյալներ ստեղծում սոցիալիզմի համար։ Այդ նույն տեսակետից վերլուծության ենթարկելով բաժ-

նետիրական կապիտալը, Մարքսը հանգում է այն եզրակացության, որ կապիտալի այդ ձևին ևս հատուկ են կապիտալի բոլոր հակասությունները և որ իր վերելքի արագ տեմպերով ու աշխատանքի հանրայնացման լայն մասշտաբներով բաժնետիրական կապիտալը դյուրացնում է արտադրության միջոցների մասնավոր սեփականության փոխարինումը դրանց հասարակական սեփականությամբ, մոտեցնում է պրոլետարական ռևոլյուցիայի բռնկման ժամը և ըստ այնմ այդ ռևոլյուցիայի նախապատրաստման պողոտայում ներկայացնում է մի կարևոր և անհրաժեշտ անցում՝ անցում կապիտալիզմից դեպի սոցիալիզմը, որտեղ արտադրողները կտիրապետեն արտադրության միջոցներին հասարակական սեփականության հիմունքներով և իրենք էլ կտնօրինեն իրենց աշխատանքի ամբողջ արդյունքը։

Մարքսի կենդանության ժամանակ կապիտալի բարձրագույն ձևը բաժնետիրական կապիտալն էր։ Առաջին տրեստները Ամերիկայում և Եվրոպայում երևան եկան միայն 1890-ական թթ. սկզբներին։ Ինքնըստինքյան պարզ է, որ տրեստների և տրեստային կապիտալի խնդիրներով Մարքսը զբաղվել չէր կարող, իսկ Էնգելսը հնարավորություն ուներ այդ մասին միայն որոշ դիտողություններ անելու, քանի որ տրեստները նոր էին սկսել կազմակերպվել և նրանց կազմակերպման առաջին տարիներին Էնգելսը ամբողջովին զբաղված էր «Կապիտալի» երրորդ հատորի հրատարակության ծանր աշխատանքով։ Ահա այդ աշխատանքի պրոցեսում է, որ Էնգելսը կանգ է առնում տրեստների խնդրի վրա և չափազանց կարևոր դիտողություններ է անում։ Այստեղ նախ նկատի ունենք Էնգելսի ծանոթագրությունը «Կապիտալի» III հատորի 6-րդ գլխին (հավելված 16)։ Խոսելով այն մասին, որ կարտելների ու տրեստների միջոցով բուրժուազիան հուսով է կարգավորել արտադրությունը, իսկ արտադրության հետ նաև գներն ու շահույթը, նման հույսերը Էնգելսը հայտարարում է անհիմն, դատելով, որ թեև արտադրություն կարգավորման կարիք է զգում, բայց անշուշտ կապիտալիստական դասակարգը չէ, որ կոչված է գործնականապես իրականացնել այն, և որ այդ կարտելներն իրենց նպատակն են համարում հոգալ միայն այն մասին, որպեսզի մանր կապիտալիստները խոշորներին կուլ գնան ավելի արագորեն, քան մինչև հիմա։

Մյուս դիտողությունը գտնվում է «Կապիտալի» նույն հատորի 27-րդ գլխում՝ Էնգելսի մի հավելումում, որն ավարտվում է հեղինակի բազմանշանակալից համոզմունքի արտահայտությամբ այն մասին, որ Անգլիայի մոնոպոլիստական կապիտալը «ամենաբավարար կերպով նախապատրաստում է հետագա սեփականազրկումը ամբողջ հասարակության, ազգի ձեռքով»[1]։

Էնգելսի մահից հետո, երբ կապիտալիզմը ոտք էր կոխել իմպերիալիզմի դարաշրջան, զարգացման նոր փուլի հանճարեղ դիտական վերլուծությունը և գնահատականը տվեց Վ. Ի. Լենինը իր բազմաթիվ աշխատություններում, առաջին հերթին՝ «Իմպերիալիզմը, որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա» աշխարհահռչակ աշխատությունում, որը Կ. Մարքսի «Կապիտալի» պատմականորեն ու տրամաբանորեն անհրաժեշտ շարունակությունն ու լրացումն է։ 1916 թ. հետո, երբ լույս տեսավ «Իմպերիալիզմի» առաջին հրատարակությունը, համաշխարհային պատմության ընթացքը լիովին արդարացրեց Լենինի բոլոր կանխատեսումները։

---

1 «Կապիտալ», 1953 թ. ռուս հրատ., հատ. III, էջ 125 և 451։

Իր հռչակավոր «Սպառնացող աղետը և ինչպես պայքարել նրա դեմ» աշխատությունում, գրած 1917 թ. սեպտեմբերին, Լենինը նշում է, որ «պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը սոցիալիզմի նյութական լիակատար նախապատրաստում է, նրա նախադուռն է, պատմական սանդուղքի այն աստիճանն է, որի (աստիճանի) ու սոցիալիզմի աստիճանի միջև ոչ մի միջանկյալ աստիճան չկա»[2]։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին սոցիալիստական պարտիաների շարքերում լայն տարածում էր գտել այն համոզմունքը, թե պրոլետարական ռևոլյուցիան հնարավոր է միայն այն ժամանակ, երբ կապիտալիստական զարգացած արտադրությունը կնվաճի երկրագնդի բոլոր աշխի ընկնող երկրները և դրանց բնակչության մեծամասնությանը ռեփականատուրկ կանի, պրոլետարիատի շարքերը կնետի։ Իմպերիալիզմի հարցերով II Ինտերնացիոնալի գաղափարախոսներից շատ քչերն էին հետաքրքրվում ու զբաղվում, իսկ իմպերիալիզմի էությունը նրանցից և ոչ մեկն էլ լիովին ըմբռնել չկարողացավ։

Վերը նշած իր նույն աշխատությունում, քննադատելով Լսեռներին ու Ռենշներներին, Լենինը գտնում է, որ «նրանք սոցիալիզմը պատկերացնում էին որպես ինչ-որ հեռավոր, անհայտ, մութ ապագա»։ Այնինչ, շարունակում է Լենինը, «սոցիալիզմն այժմ մեզ վրա նայում է արդի կապիտալիզմի բոլոր պատուհաններից, սոցիալիզմն անմիջականորեն, պրակտիկ կերպով պատկերանում է ամեն մի խոշոր միջոցառումից, որը մի քայլ է ներկայացնում դեպի առաջ՝ այդ նորագույն կապիտալիզմի բազայի վրա»[3]։ Մի էջ վեր Լենինը նշում է, որ մոնոպոլիաներից «առաջ գնալ չի կարելի, առանց դեպի սոցիալիզմ գնալու»։

Նման հետևության հանգելու համար պահանջվում էր համոզված լինել ոչ միայն նրանում, որ արդեն զոյություն ունեն սոցիալիզմի նյութական նախադրյալները, այլև նրանում, որ իմպերիալիզմի պայմաններում կապիտալիզմն արագորեն քայքայվում ու սնանկանում է, զարգացման նորմալ ընթացք ունենալ չի կարող, անզոր է լայնորեն օգտագործել արդի գիտությունն ու տեխնիկան և արտադրողական ուժերը մի ավելի բարձր մակարդակի հասցնել։ Եվ Լենինը համակողմանիորեն հետազոտելով իմպերիալիզմի բոլոր արտահայտությունները, հանգեց այն անսահման կարևոր եզրակացությանը, որ ուղղակի իմպերիալիզմի մասին խոսք լինել չի կարող, քանի որ իմպերիալիզմը ոչ միայն պարազիտային, այլև միաժամանակ փտող ու մեռնող կապիտալիզմն է, որը, հետևապես, անզոր է շարունակվել որպես կապիտալիզմ և անխուսափելիորեն իր տեղը զիջելու է սոցիալիզմին։

Սակայն, զգուշացնում է Լենինը, «սխալ կլիներ կարծել, թե փտության այս տենդենցը ժխտում է կապիտալիզմի արագ աճումը. ոչ, իմպերիալիզմի դարաշրջանում արդյունաբերության առանձին ճյուղերը, բուրժուազիայի առանձին շերտերը, առանձին երկրներն ավելի կամ պակաս ուժով երևան են հանում այս տենդենցներից մերթ մեկը, մերթ մյուսը։ Ամբողջությամբ առած՝ կապիտալիզմն անչափ ավելի արագ է աճում, քան առաջ, սակայն, այս աճումը ընդհանրապես ոչ միայն ավելի անհամաչափ է դառնում, այլև անհամա-

---

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 25, էջ 460։

3 Նույն տեղում։

չափությունը երևան է գալիս մասնավորապես նրանով, որ փտում են նաև դասակարգերով ամենից ուժեղ երկրները (Անգլիա)»[4]։

Անհնարին է նշել երկու կապիտալիստական երկիր, որոնք կանգնած լինեն տնտեսական զարգացման միևնույն մակարդակի վրա. նույնքան, եթե ոչ ավելի մեծ չափերով, նրանք իրարից տարբերվում են իրենց պատմական անցյալով, իրենց կուլտուրայով, կենցաղով և իրենց դասակարգային հարաբերություններով։

Կապիտալիստական առաջավոր երկրներն իրարից տարբերվում են նույնիսկ իրենց բանկերի ու տրեստների կոնկրետ ձևերով, նկատում է Լենինը։ «Առավել ևս միատեսակ չեն, չնայած նրանց միասնությանը հիմնականում, քաղաքական ձևերն առաջավոր իմպերիալիստական երկրներում՝ Ամերիկայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում»։ «Նույնպիսի բազմազանություն երևան կգա և այն ճանապարհին, որով մարդկությունը կընթանա այժմյան իմպերիալիզմից դեպի վաղվա սոցիալիստական ռևոլյուցիան։ Բոլոր ազգերը կգան դեպի սոցիալիզմ՝ դա անխուսափելի է, բայց բոլորը կգան ոչ բոլորովին միատեսակ. յուրաքանչյուրը յուրահատկություն կմտցնի դեմոկրատիայի այս կամ այն ձևի մեջ, պրոլետարիատի դիկտատուրայի այս կամ այն տարատեսակության մեջ, հասարակական կյանքի զանազան կողմերի սոցիալիստական վերափոխումների այս կամ այն տեմպի մեջ»[5]։

Հասարակական բոլոր մյուս խոշոր հարցերի լուծման նկատմամբ էլ Լենինը ցուցաբերում է նույն նուրբ դիալեկտիկական մոտեցումը։ Այսպես, օրինակ, պարտիայի 8-րդ համագումարում, վերլուծելով ազգային ինքնորոշման պահանջի կիրառման պայմանները, Լենինը նշում է, որ «զանազան ազգեր ընթանում են պատմական միատեսակ ճանապարհով, սակայն, վերին աստիճանի բազմատեսակ զիգզագներով ու արահետներով, և որ ավելի կուլտուրական ազգերը հայտնապես ընթանում են այլ կերպ, քան պակաս կուլտուրական ազգերը։ Ֆինլանդիան ընթացավ այլ կերպ։ Գերմանիան ընթանում է այլ կերպ»[6]։

Նպատակահարմար ենք համարում առաջ բերել այդ նույն գրքի մի այլ կրասիկ ձևավորում, որ Լենինը տվել է 1923 թ. հունվարին «Մեր ռևոլյուցիայի մասին» իր անկրկնելի աշխատությունում։ Քննադատելով ռեֆորմիստների և իրենց ռևոլյուցիոներներ ձևացնող մանր-բուրժուական գաղափարախոսների հայացքները Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի նկատմամբ, Լենինը նշում է. «Նրանց համար միանգամայն օտարոտի է ամեն մի միտք այն մասին, որ ամբողջ համաշխարհային պատմության զարգացման ընդհանուր օրինաչափության պայմաններում բոլորովին չեն բացառվում, այլ ընդհակառակը ենթադրվում են զարգացման առանձին ժամանակաշրջաններ, որոնք ներկայացնում են այդ զարգացման կամ ձևի, կամ կարգի յուրակերպությունը»։

* *

1917 թ. հոկտեմբերին Ռուսաստանում կատարվեց խոշորագույն պրոլետարական ռևոլյուցիա, սակայն Ռուսաստանը կուլտուրապես համեմատաբար

4 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, էջ 402—403։
5 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 81։
6 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 230։
7 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 567—568։

հետամնաց երկիր էր։ Այս պարագան Հոկտեմբերի հակառակորդներն օգտագործեցին ապացուցելու համար, որ նման հետամնաց երկրում սոցիալիզմի կառուցումն անհնարին է և հետևապես պրոլետարական դիկտատուրայի նորաստեղծ պետությունը պատմականորեն դատապարտված է կատարյալ անհաջողության։

Երկրորդ Ինտերնացիոնալի տեսաբանների այդ բոլոր դատողություններից կարելի էր հանգել այն միակ եզրակացությանը, որ պրոլետարական ռևոլյուցիան չի կարող կատարվել ու հաղթանակել ոչ մի երկրում, որի իշխող ու շահագործող դասակարգերը դեռևս չեն ստեղծել սոցիալիզմի տնտեսական ու կուլտուրական նախադրյալները։ Միաժամանակ նրանց գրվածքների ընթերցումից ստացվում էր այն տպավորությունը, որ Սովետական պետության ղեկավարները թերագնահատում են կուլտուրայի դերը սոցիալիստական շինարարության գործում և սոցիալիզմը մտադիր են կառուցել անգրագետ մասսաների ձեռքով։

Լենինը հեգնում էր իր հակառակորդներին, որոնք Սովետական իշխանության դեմ մղած իրենց պայքարում ելնում էին այն սխալ ենթադրությունից, թե սոցիալիզմի համար որպես նախադրյալ պահանջվող կուլտուրան կարող է ստեղծվել միայն բուրժուական կարգերում՝ կալվածատերերի ու կապիտալիստների ձեռքով։ Բնական է, որ Լենինը սնվիճելի էր համարում մասսաների կուլտուրականության մի որոշ մակարդակ սոցիալիզմի կառուցմանն անցնելու համար, սակայն, Հոկտեմբերի պատմական մեծ հաղթանակից հետո ընդգծում էր, որ քաղաքական ու սոցիալական վիթխարի ռևոլյուցիան հաջողությամբ ավարտած բանվորներն ու գյուղացիները ընդունակ են կուլտուրապես վերափոխելու երկիրը։ Հարցի գրական պատասխանը կոմունիստների շարքերում որևէ կասկածի տեղիք տալ չէր կարող, և Լենինը պատասխանելով II Ինտերնացիոնալի ռեֆորմիստներին, գրում էր. «Սոցիալիզմ ստեղծելու համար, ասում եք դուք— քաղաքակրթվածություն է պահանջվում։ Շատ լավ։ Իսկ ինչո՞ւ մենք չենք կարող, նախ, ստեղծել մեզ մոտ քաղաքակրթվածության այնպիսի նախադրյալներ, ինչպիսիք են կալվածատերերի արտաքսումը և ռուսաստանյան կապիտալիստների արտաքսումը, իսկ հետո արդեն սկսել շարժումը դեպի սոցիալիզմ։ Ո՞ր գրքերում եք կարդացել դուք, որ սովորական պատմական կարգի այդպիսի ձևափոխումներն անթույլատրելի են կամ անհնարին»[8]։

Սկսած իր ստեղծման հենց առաջին օրերից Սովետական իշխանությունն օգտագործում էր իր տրամադրության տակ գտնվող ամեն մի միջոց՝ ժողովրդի կուլտուրական հետամնացությունը հաղթահարելու, գիտությունն ու արվեստը աշխատավոր ամենալայն մասսաների սեփականությունը դարձնելու համար։ Լենինը գտնում էր, որ անգրագետ մարդը քաղաքականությունից դուրս է և որ երկրում տիրող անգրագիտությունը վերացնելու համար պահանջվում է շինարարության մյուս բնագավառներում կատարվող ծախսերը հնարավորին չափ կրճատել, խնայել ամեն մի կոպեկ, սահմանափակել նույնիսկ պետհրատի բյուջեն՝ ընթերցող լայն մասսաներ ստեղծելու համար։

Հոկտեմբերյան ռևոլյուցիան ծավալվում էր դասակարգային հարաբերությունների և միջազգային դրության շատ ավելի բարդ պայմաններում, քան մինչ այդ կատարված բոլոր մյուս ռևոլյուցիաները։ Հաղթական երթով ծավալ-

---

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 569—570։

վող պրոլետարական ռևոլյուցիան օբյեկտիվորեն նախապատրաստված էր ոչ միայն Ռուսաստանում մինչ այդ տիրող սոցիալական-տնտեսական հարաբերություններով, այլև կապիտալիզմի ամբողջ պատմությամբ, համաշխարհային իմպերիալիզմի ամբողջ քաղաքականությամբ։ Բայց եթե մի մեծ ռևոլյուցիա համաշխարհային արմատներ ունի, ապա նրա հետևանքները ևս չեն կարող չկրել համաշխարհային բնույթ։ Մեծ Հոկտեմբերը անասելի ծանր հարված հասցրեց միջազգային բուրժուազիային, խոր ճեղքվածքներ առաջացրեց կապիտալիզմի ամբողջ շենքում, վերջ դրեց կապիտալիզմի մշտնջենականության տեսության հետ կապված բոլոր պատրանքներին, իմպերիալիստական բուրժուազիային զրկեց ոչ միայն ապրանքի վաճառահանման և կապիտալի ներդրման մի վիթխարի շուկայից, այլև ցարական կառավարության նման մի հավատարիմ դաշնակցից, որը բուրժուական աշխարհում ճանաչվում էր որպես սոցիալական և ազգային-ազատագրական շարժումները խեղդելու հզոր ուժերից մեկը։

Հոկտեմբերը ոչ թե առանձնակի, աշխարհից կտրված երևույթ էր, այլ առաջինը պրոլետարական ռևոլյուցիաների շարքում, որոնց տնտեսական ու քաղաքական նախադրյալները նամաշխարհային մասշտաբով հասունացել ու ներհասունացել էին։ Իմպերիալիզմը իր շոշափուկներով պարփակել էր ամբողջ երկրագունդը, ստեղծել էր մի վիթխարի օրգանիզմ, որի սիրտը գտնվում էր Արևմտյան Եվրոպայում, իսկ վերջավորությունը՝ Իրանում ու Չինաստանում, Կենտրոնական Աֆրիկայում և նման այլ հետամնաց երկրներում։ Եվ եթե պրոլետարական առաջին ռևոլյուցիան բռնկվեց և հաղթանակեց ոչ թե Անգլիայում կամ Գերմանիայում, այլ կապիտալիզմի զարգացման միջակ մակարդակի վրա գտնվող մի երկրում, ապա այդ տեղի ունեցավ այն պարզ պատճառով, որ 1917 թ. կապիտալիստական երկրների շարքում Ռուսաստանն առաջին տեղն էր գրավել իր ռևոլյուցիայի մասսայական չափերով և հզորությամբ, այնինչ ռուսական բուրժուազիան մեծապես զիջում էր առաջավոր կապիտալիստական երկրների բուրժուազիային թե՛ իր տնտեսական ռեսուրսներով և թե՛ իր կազմակերպվածությամբ ու ժողովրդի մեջ վայելող հեղինակությամբ։ Ռևոլյուցիոն և հակառևոլյուցիոն ուժերի դրան ուղղակի հակառակ հարաբերություն էր ստեղծվել 1918 թ. գերմանական ռևոլյուցիայի ժամանակ։ Ինչպես նշում էր Վ. Ի. Լենինը, գերմանական իմպերիալիզմի կեղևը «շինված է, դժբախտաբար, ամենալավ պողպատից, ուստի և չի ջարդվում ամեն մի ճուտիկի ջանքերով», այնինչ ռևոլյուցիոն ճգնաժամի նախօրեին գերմանական բանվորները «չունեին իսկական ռևոլյուցիոն պարտիա»[9]։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակը ոչ պակաս չափով պայմանավորված էր այն ահագին օգնությամբ, որ ռուսական պրոլետարիատին մատուցեց նրա հավատարիմ դաշնակիցը՝ կապիտալիստական երկրների գիտակից ու կազմակերպված պրոլետարիատը։ Խնդիրը չի վերաբերում միայն անմիջաբար ցույց տված օժանդակությանը։ Շատ ավելի կարևոր են կապիտալիստական երկրների պրոլետարիատի ապստամբությունները, ռևոլյուցիոն շարժումները, աշխատանքը բանակում, մասսայական գործադուլները, Ռուսաստանի հակառևոլյուցիոն բանակների համար պատրաստած ռազմամթերքների առարման

9 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 426 և 663։

արգելումը, ինտերվենցիային վերջ դնելու պահանջները մամուլում, պառլամենտներում, հրապարակային ցույցերում և այլն և այլն։ Բուրժուազիան, մինչև ականջները զրաղված լինելով ներքին ազատագրական շարժումների ճնշումով, անզոր գտնվեց խոշոր բանակներ ուղարկել սովետական երկիրը։ Այդ նույն շարժումների հետ է կապված այն հանրահայտ փաստը, որ Օդեսայից հեռացավ ֆրանսիական ռազմական նավատորմը, Արխանգելսկից՝ անգլիական ռազմական նավատորմը և Թիֆլիսից՝ գերմանական դիվիզիաները և հնդիկներից բաղկացած մի անգլիական գումարտակ։

Վ. Ի. Լենինը մեծ գոհունակությամբ նշում էր, որ Հոկտեմբերյան ռևոլյուցիային հաջողվեց բուրժուազիայից խլել և իր կողմը գրավել մի շարք կապիտալիստական երկրների բանվորներին, զինվորներին ու ինտելիգենցիայի լավագույն մասը։

Մեր երկիրը նշանավոր չափերով այդ շարժումներին և այդ եղբայրական ինտերնացիոնալ օգնությանն է պարտական նրանով, որ ինտերվենցիան ու բաղաքացիական պատերազմը տևեցին ոչ ավելի, քան 2—3 տարի։

Հոկտեմբերի միջազգային ներգործությունը չէր կարող սահմանափակվել զարգացած կապիտալիստական երկրների շահագործվող մասսաներով։ Նրա կիզիչ ճառագայթները թափանցեցին աշխարհի բոլոր անկյունները, որտեղ տիրում էին շահագործումն ու քաղցը, ստրկացումն ու մարդկային արժանապատվության ոտնահարումը։

* * *

Պրոլետարիատի առաջին մեծ ռևոլյուցիան կատարվեց մի երկրում, սակայն, ամենածանր հարված հասցրեց համաշխարհային իմպերիալիզմին, լայն դռներ բացեց դեմոկրատիզմի և սոցիալիզմի համաշխարհային տարածման համար, ապացուցեց կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու հնարավորությունը, սկզբնավորեց մարդկային ողջ հասարակության պատմության նոր, սոցիալիստական դարաշրջանը։ Հոկտեմբերի թարմացուցիչ հողմը ի թիվս այլ ժողովուրդների ոտքի կանգնեցրեց և պատմական ինքնակամ ստեղծագործության կոչեց նաև Արևելքի ժողովուրդներին, որոնք գաղութային ռեժիմի և կապիտալիստական սիստեմի նկատմամբ համակված էին ամենաբուռն ատելությամբ։ Այդ ժողովուրդներին Հոկտեմբերը զինեց ազատագրման պայքարի օրագրով, օժտեց համարձակությամբ, ինքնուրույնությամբ, ձեռներեցության բարձր շնորհքով, մարդկային արժանապատվության, ժողովուրդների բարեկամության և սոցիալիստական հումանիզմի վեհ գաղափարներով, իրենց հզոր կարողությունների փրկարար գիտակցությամբ, հերոսանալու, զոհվելու և խաղաղ աշխատանքի ու բարեկեցության պայմանները նվաճելու աննկուն վճռականությամբ և իրենց արդար պայքարի հպարտանակի մեծամեծ հույսերով։

Հատուկ ուշադրության է արժանի այն հզոր ազդեցությունը, որ Արևելքի ժողովուրդների վրա գործեց ազգային հարցի լուծումը Սովետական Միությունում։ Պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի տակ ստեղծված նոր տիպի այդ պետությունը չէր սահմանափակվում նրանով, որ իր տերիտորիայի վրա ապրող բոլոր ժողովուրդների նկատմամբ ճանաչում էր ազգային ինքնորոշման իրավունքը, այլև դրա հետ միաժամանակ կազմակերպում էր նրանց տնտեսական ու կուլտուրական վերելքի դժվարին գործը։ Տասնյակ հետամնաց, նույն-

իսկ գրից զուրկ ժողովուրդներ ստեղծեցին բարձր արդյունաբերություն և կուլ-տուրա, նրանցից շատերը սկսեցին արտահանել տասնյակ տեսակի մեքենա-ներ, այնինչ առաջներում լավագույն դեպքում տալիս էին միայն արհեստի ամենատարրական արտադրանք։

Սովետական Միության հարուստ փորձից Արևելքի բազմաթիվ ժողովուրդ-ներ քաղեցին այն կարևոր դասը, որ բանվորն ու գյուղացին Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ ընդունակ են տապալել ոչ միայն գաղութային իմպերիալիստների լուծը, այլև յուրաքանչյուր երկրում ազատագրվել իրենց շահագործող ու կեղեքող ունևոր դասակարգերից և կառուցել սոցիալիստական հասարակարգ, որը միայն կարող է ապահովել նրանց ազատագրումը ներքին և արտաքին թշնամիներից և իրենց անտեսական ու կուլտուրական զարգաց-ման համար պահանջվող պայմաններ ստեղծել։

Որ ստրկությունը գիտակցող ստրուկը հենց դրանով դառնում է ռևոլյու-ցիոներ, գրում է Լենինը։ Տվյալ դեպքում ստրկության գիտակցությունը հա-մակեց հարյուր միլիոնավոր մարդկանց, իսկ մասսաներին տիրացած գաղա-փարը, Մարքսի բնորոշումով հենց ինքը վերածվում է նյութական ուժի, դառնում է առաջխաղացման մի հզոր լծակ։ Եվ ահա Արևելքի ստրկացած ժո-ղովուրդների ահռելի զանգվածը ծառանում է իմպերիալիզմի ու ֆեոդալիզմի, կոմպրադորական բուրժուազիայի և վաշխառուական ոհմակի դեմ, պայքարի ընթացքում ստեղծում է բազմաթիվ մարտական կազմակերպություններ ու զինված բանակներ և արդեն մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը մի շարք երկրներում այնքան խոշոր հաջողություններ է ձեռք բերում, որ խորհող յուրաքանչյուր մարդու համար ակնհայտ է դառնում գաղութային արդի սիս-տեմի անանկացումը, նրա մոտակա խորտակման անխուսափելիությունը։ Ներ-քին բաղաբաղդիական պատերազմների և դրսի գիշատիչ ուժերի դեմ ուղղված ժողովրդական հուժկու շարժումների ընթացքում ծնունդ են առնում և ձևավոր-վում մի շարք Կոմունիստական պարտիաներ, որոնք գլխավորում են համա-պատասխան երկրների ազատագրական շարժումները, դրանց օժտում պայքա-րի թեորիայով ու ծրագրով, տարածում են մարքսիզմ-լենինիզմի ուսմունքը և մշտական կապ են հաստատում Սովետական Միության հետ։ Այդ բոլոր եր-կրներում Կոմունիստական պարտիաները ներկայացնում են այն միակ ուժը, որն ընդունակ է ստեղծել պայքարի համաժողովրդական ճակատ, որևէ զիջում չի անում ներքին ու արտաքին շահագործող դասակարգերին, լիովին ազատ է նացիոնալիզմից և օժտված է ազատագրական շարժումը հաղթանակով պսա-կելու համար պահանջվող բոլոր տվյալներով։

Մինչև Մեծ Հոկտեմբերի հաղթանակը գաղութային և կախյալ երկրների ժողովուրդները հանդիսանում էին իմպերիալիզմի համաշխարհային տիրա-պետության ամենակարևոր բաղաներից մեկը, նրա ռեզերվը, այնինչ Հոկտեմ-բերի ազդեցության տակ նրանք երեսները դարձրին դեպի Սովետների աշխար-հը, դարձան սոցիալիզմի բարեկամներ ու դաշնակիցներ, տատանեցին կա-պիտալիզմի համաշխարհային շենքը և հենց դրանով ահագին ծառայություն մատուցեցին սոցիալիզմի հետագա հաջողությունների գործին։

Գաղութային ժողովուրդների մասսայական հակաիմպերիալիստական շարժումները, այդ ժողովուրդների ամենալայն խավերում Սովետական Միու-թյան նկատմամբ ուժեղացող սերն ու համակրանքը և նամանավանդ նրանց մոտ գոյացող Կոմունիստական պարտիաների հեղինակության արագ բարձ-

բացումը բուրժուազիայի և ռեֆորմիստների շարքերում կատարյալ իրարանցում առաջացրին։ Բուրժուազիայի դաշափարախոսները բարձրացրին իսկական վայնասուն, ճգնելով համոզել ամբողջ աշխարհը, որ այդ բոլոր շարժումները հետևանք են Սովետական Միությունից «ռևոլյուցիայի ներմուծման», լռության մատնելով այն հարցը, թե ո՞րտեղ պետք է որոնել Հոկտեմբերյան ռևոլյուցիայի արմատները, թե այդ ռևոլյուցիան ո՞ր երկրից ներմուծվեց Ռուսաստան։ Եթե այդ գիտուն պարոնները փորձեին բարձրացնել այս վերջին հարցը և բարեխղճորեն որոնեին նրա իսկական պատասխանը, հեշտությամբ կհանդեին այն միակ եզրակացությանը, որ մեր ապրած դարաշրջանի բոլոր ազատագրական շարժումների արմատները թաղված են կապիտալիստական հասարակարգի խորքերում։ Մի բան է Հոկտեմբերի վիթխարի ազդեցությունը իմպերիալիստական ոհմակների ձեռքով ստրկացած Արևելքի վրա, այլ բան ազատագրական շարժման պատճառները և նրա նախադրյալների հասունացումը։ Բուրժուազիայի ուսյալ գաղափարախոսները տատմպորին շփոթում են երեխայի ծնողների հետ։

Հոկտեմբերը շահագործվող և կեղեքվող մարդկության այդ հրաշալի գաղությունը, բոլոր երկրների աշխատավոր մասսաների առջև պայքարի ու ազատագրման լայն պողոտաներ և վեհ հորիզոններ բացեց, հիմք դրեց մարդկության անցմանը կապիտալիզմից սոցիալիզմին։ Սակայն, քանի որ Սովետական Միությունն աշխարհում դեռևս միակ սոցիալիստական երկիրն էր, բուրժուական պետությունների աշխատավոր մասսաների համար դժվար էր ըմբռնել այն անսահման կարևոր դրույթը, որ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակով ամբողջ մարդկությունը ոտք է կոխում իր գոյության մի նոր դարաշրջան՝ սոցիալիզմի և կոմունիզմի դարաշրջանը։

Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով գերմանա-իտալական ֆաշիզմը գլխովին ջախջախվեց պատերազմի բոլոր ճակատներում։ Վեց տարի շարունակ իր կատարած անլուր վայրագությունների հետևանքով ֆաշիզմը ատելի դարձավ ամբողջ աշխարհում, պատմականորեն ու բարոյապես սնանկացավ։ Եվրոպայի և Ասիայի մի շարք երկրներում վերջ դրվեց նաև օտարերկրյա իմպերիալիստական դերիշխանությանը։ Այդ երկրներում հաստատվեց նոր տիպի դեմոկրատիա՝ ժողովրդական դեմոկրատիան, որն ընդգրկում էր բնակչության բոլոր հակաֆաշիստական և հակաիմպերիալիստական խավերը։ Ժողովրդական դեմոկրատիայի պետական ու հասարակական մարմինները գործում էին բանվորական և կոմունիստական պարտիաների ղեկավարությամբ ու դրանց ծրագրերով, նախապատրաստում էին անցումը սոցիալիզմին։

Արտադրության միջոցների հանրային սեփականության անրաժան տիրապետությունը սոցիալիստական երկրներում վերացնում և ընդհանրապես անհնարին է դարձնում մրցումը ոչ միայն այդ երկրներից յուրաքանչյուրում, այլև նրանց փոխադարձ հարաբերություններում, սոցիալիստական ամբողջ լագերի շրջանակներում։ Մրցումը փոխարինվում է փոխադարձ օգնությամբ, եղբայրական կապերով, ժողովուրդների բարեկամությամբ։ Պրոլետարական ինտերնացիոնալիզմն քաղաքականությունը սոցիալիստական բոլոր ժողովուրդների համար ոչ միայն բարոյական-քաղաքական պարտականություն է, այլև բխում է արդի բարձր արտադրողական ուժերը բազմակողմանիորեն ու լրիվ օգտագործելու և անընդհատ բարձրացնելու հնարավորությունից և պահանջից։

Կապիտալիզմի համեմատությամբ սոցիալիզմին հատուկ են մեծամեծ առավելություններ, որոնց օգտագործման հետևանքով սոցիալիստական երկրների արտադրությունը տարեկան աճում է 10—12 տոկոսով, այնինչ կապիտալիստական տնտեսության մեջ այդ աճը կազմում է ընդամենը 2—4 տոկոս։ Արտադրության միջոցների հանրային սեփականությունը սոցիալիստական արտադրությանը հնարավորություն ընձեռեց զարգանալու գիտականորեն հիմնավորված պլաններով։ Քաղաքի և գյուղի, մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրության վերացումը, բանվորի և գյուղացու եղբայրական սերտ դաշինքը, ինչպես և արտադրության հասարակական բնույթի և արդյունքի յուրացման մասնավոր կապիտալիստական եղանակի հակասության վերացումը արտադրողական ուժերի անընդհատ ու արագ վերելքի լայն ասպարեզ են բացում, սոցիալիստական երկրների տնտեսական ու կուլտուրական զարգացման հզոր նախադրյալներ են հանդիսանում։ Նույն ուղղությամբ վիթխարի խթանիչ դեր են կատարում սոցիալիստական մրցության բոլոր ձևերը, հատկապես կոմունիստական բրիգադները։ Սովետական Միության 25 հազար գործարաններում ստեղծվել է արդեն կոմունիստական աշխատանքի մի միլիոն բրիգադ, որոնք ընդգրկում են 20 միլիոն բանվոր ու ծառայող և իրենց խանդավառ աշխատանքով ձգտում են նվաճել այդ բարձր ու պատվավոր կոչումը։

Իրենց տեսական ու պրակտիկ ամբողջ աշխատանքում սոցիալիստական երկրները անշեղորեն ղեկավարվում են մարքսիզմ-լենինիզմի վեհ սկզբունքներով, հայտնաբերում և տեսականորեն ձևակերպում են սոցիալիզմի զարգացման օբյեկտիվ օրինաչափությունները, դրանց հիման վրա կազմում են սոցիալիստական շինարարության ծրագրերը և աշխատավորական ամբողջ մասսայի բարոյական-քաղաքական միասնության մթնոլորտում մեծ հաջողությամբ կառուցում են սոցիալիզմի վսեմ շենքը, իսկ Սովետական Միությունը, ավարտելով սոցիալիզմի կառուցումը, արդեն ձեռնարկել է կոմունիզմի ծավալուն շինարարությունը։ Ստեղծում է կոմունիզմի նյութա-տեխնիկական բազա, ընդ որում՝ այդ շինարարության պլանները կատարվում և գերակատարվում են։

* * *

Քանի դեռ Սովետական Միությունը աշխարհում միակ սոցիալիստական պետությունն էր, շրջապատված դասակարգային թշնամիներով, միջազգային բուրժուազիան նրան քիչ էր հաշվի առնում և ամեն կերպ ջանում էր նրան վարկաբեկել ամբողջ աշխարհում։ Բայց երբ հիմնականում Սովետական Բանակի կողմից հիտլերյան բանակը ջախջախվեց ու ենթարկվեց կապիտուլյացիայի, առաջացան ժողովրդա-դեմոկրատական պետություններ, որոնք հետագայում դարձան սոցիալիստական պետություններ և Սովետական Միության հետ ձեռք ձեռքի տված ստեղծեցին աշխարհի սոցիալիստական լագերը, երբ կատարվեցին Սովետական Միության հետպատերազմյան հնգամյա և այլ շինարարական պլանները, բարձր մակարդակի հասան Սովետական երկրի տեխնիկան և գիտությունը, Սովետական Բանակն ապահովվեց ջերմամիջուկային և հրթիռային զենքով, տիեզերքի ուսումնասիրության գծով Սովետական Միությունը գերազանցեց բոլոր մյուս երկրներին ու ամբողջ աշխարհին բազմաթիվ ակնառու ապացույցներ տվեց իր խոշորագույն հաջողությունների մասին գիտության ու տեխնիկայի, արդյունաբերության ու գյուղատնտեսության, ներքին

ու արտաքին քաղաքականության բազմաթիվ բնագավառներում,—Սովետական Միության և սոցիալիստական ամբողջ լագերի այդ հաջողություններից հետո ու նրանց հետևանքով արմատականորեն փոխվեցին միջազգային հարաբերությունները, փոխվեցին հօդուտ սոցիալիզմի և ի վնաս կապիտալիզմի։

Բուրժուազիայի համաշխարհային դիրքերի թուլացումը նախ և առաջ կապիտալիզմին հատուկ հակասությունների սրումն է, նրա համար ստեղծված տենդային դրությունն է, նրա օրգանիզմը մաշող անբուժելի ընդհանուր ճգնաժամն է, որն արդեն ոտք է կոխել իր զարգացման երրորդ փուլը։

Կապիտալիզմի քայքայման պրոցեսի ամենահամոզիչ ցուցանիշը սոցիալիստական լագերի երկրների տնտեսական ու կուլտուրական արագ վերելքն է։ Եթե համաշխարհային արդյունաբերական արտադրանքում այդ երկրների բաժինը 1950 թ. կազմում էր 20 տոկոս, 1960 թ. այս բարձրացավ մինչև 36 տոկոս, իսկ 1980 թ. կհասնի 66 տոկոսի, այսինքն սոցիալիզմը կգերազանցի կապիտալիզմին, իշխող դիրքեր կգրավի ամբողջ աշխարհում։

Կապիտալիզմի և սոցիալիզմի ուժերի փոխադարձ հարաբերությունների վերլուծությունը լրիվ չի լինի, եթե հաշվի չառնենք մեր օրերի մի այնքան խոշոր եղելություն, որպիսին գաղութային և կախյալ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումն է։ Այդ շարժումը պսակվել է և շարունակում է պսակվել պատմական խոշոր հաղթություններով, որոնցից ամենակարևորը թառասունից ավելի նոր ու սուվերեն պետությունների գոյացումն է։ Քանի որ այդ շարժումն անմիջապես ուղղված է իմպերիալիզմի դեմ, նրա յուրաքանչյուր հաղթություն, ծանր հարված ներկայացնելով կապիտալիզմի համար, հեշդրանով նպաստում է սոցիալիզմի միջազգային դիրքերի ամրապնդմանը։ Հատուկ ուշադրության է արժանի այն պարագան, որ կապիտալիզմի լծից ազատագրված այդ երկրների մեծամասնությունում արդեն ստեղծվել են կոմունիստական և բանվորական պարտիաներ։ Այդ երկրների ժողովուրդները պարզ գիտակցում են, որ իրենց ազատությունով պարտական են ոչ միայն իրենց հերոսական ազատագրական պայքարին, այլև սոցիալիստական լագերի գոյությանը, որի մեջ մտնող բոլոր պետությունները գաղութային սիստեմի դեմ հետևողական պայքար են մղում և ամեն կերպ աջակցում են գաղութների ազատագրման ազնիվ գործի հաջողությանը։

Մեր ապրած դարաշրջանը կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու դարաշրջան է համաշխարհային մասշտաբով— ահա այն գլխավոր եզրակացությունը, որ կատարեցին կոմունիստական և բանվորական պարտիաների երկու խորհրդակցությունները 1957 և 1960 թթ. և որն իր հստակ ձևակերպումը գտավ ՍՄԿՊ նոր Ծրագրում։

Խաղաղ գոյակցության պայմաններում բուրժուազիան անզոր է կանգնեցնել սոցիալիզմի առաջընթաց շարժումը և իր գոյությունը փրկելու համար պատրաստվում է խեղդել սոցիալիզմը ջերմամիջուկային զենքով։ Ահռելի վտանգ է սպառնում ամբողջ մարդկությանը և հազարավոր տարիների ընթացքում նրա մշակած քաղաքակրթությանը։ Սակայն ինչպես նշվում է ՍՄԿՊ Ծրագրում, սոցիալիստական հզոր լագերի, խաղաղասեր ոչ սոցիալիստական պետությունների, միջազգային բանվոր դասակարգի և խաղաղության գործը պաշտպանող բոլոր ուժերի միացյալ ջանքերով կարելի է կանխել համաշխարհային պատերազմը։

К ВОПРОСУ О ПЕРЕХОДЕ ОТ КАПИТАЛИЗМА К СОЦИАЛИЗМУ

Г. Н. АЗАТЯН
Член-корр. АН Арм. ССР

(Резюме)

К. Маркс и Ф. Энгельс доказали, что законы развития капитализма неминуемо ведут к его гибели, что в самом капиталистическом обществе подготавливаются материальные условия перехода к высшей форме общественной организации.

Ленинский гениальный анализ сущности империализма, как высшей и последней стадии капитализма, подтвержден всем ходом последующего развития общества. Эта последняя стадия капитализма, подчеркивал В. И. Ленин, есть вместе с тем стадия загнивания капитализма, крайнего обострения его внутренних противоречий, канун социалистической революции. Великая Октябрьская социалистическая революция, которая была подготовлена всем ходом мирового развития, открыла новую эпоху в истории человечества — эпоху перехода от капитализма к социализму.

Образование мирового социалистического лагеря неизмеримо подняло вес и международное влияние социалистической системы. Социалистическая система в кратчайшие исторические сроки выявила свое преимущество над капиталистической системой. Социализм находится в расцвете своих сил и все более превращается в определяющий фактор современной истории.

Победа социализма является следствием поступательного хода развития общества. Революции не экспортируются, а назревают в ходе развития капиталистического общества, раздираемого антагонистическими противоречиями. Мощным ударом по империализму явились продолжающийся крах колониальной системы и образование самостоятельных национальных государств на территории бывших колоний. Прогрессивные общественные силы многих из этих стран во главе с пролетариатом и его партией борются за социалистическое преобразование общества.

Коренной вопрос современности есть вопрос о войне и мире. Социалистическиее страны ведут последовательную борьбу за мир между народами, за мирное сосуществование различных социальных систем. Социалистический строй не нуждается в войне. Он всецело занят мирным созидательным трудом для осуществления своих великих идеалов. Социализм показывает свою возрастающую мощь в экономике, свой гуманный характер в борьбе за мир и мирное разрешение всех международных проблем.